Գևորգյան Ճեմարան
Էլ. - պարբերական

Gevorkian Seminary
E - Newsletter

Գ Տարի, թիվ 11,
2018 թ. ապրիլ Ա

«…Սակայն քա՛վ լիցի, որ ես պարծենամ այլ բանով, քան միայն մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով, որով աշխարհը խաչված է ինձ համար, ես էլ՝ աշխարհի համար»: (Գաղատ. 6:14)

ԽՈՒԿՈՒՄ ՄԻԱԾՆԱԷՋ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Քրիստոսի Հարության տոնին ընդառաջ՝ Ավագ երկուշաբթի օրը, Մայր տաճարում տեղի ունեցավ խոկման արարողություն, որին մասնակցում էին Պետական համալսարանի ուսանողներ, ռազմական ինստիտուտի կուրսանտներ, Էջմիածին քաղաքի Ն զորամասի շարքային զինծառայողներ: Խոկումն իրենց հոգեպարար երգեցողութեամբ զարդարեցին ԳՀՃ «Էջմիածին» երգչախումբը՝ ղեկավարությամբ բարեշնորհ Արթուր սրկ. Վարդանյանի, և «Գանձեր» երգչախումբը՝ ղեկավարությամբ բարեշնորհ Վոլոդյա սրկ. Նաջարյանի: Խոկմանը քարոզ խոսեց Տավուշի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Բագրատ եպս. Գալստանյանը:

ՍԵՄԻՆԱՐ-ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ

Գևորգյան հոգևոր ճեմարանի և ՀՀ Ոստիկանության ակադեմիայի միջև մարտի 14-ին տեղի ունեցավ սեմինար-հանդիպում: Ճեմարանականները շրջեցին ակադեմիայի տարածքում, ծաղիկներ դրեցին զոհված ոստիկանի հուշակոթողի առջև, եղան ակադեմիայի մատուռում: Սեմինարն անցկացվեց ակադեմիայի դահլիճում: Բացման խոսք ասացին ԳՀՃ տեսուչ Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանը և ակադեմիայի պետ գեներալ-լեյտենանտ Հովհ. Վարդյանը: Բանախոսությամբ հանդես եկան ԳՀՃ Զ լսարանից Իշխան սրկ. Քամալյանը և Ե լսարանից Պետրոս ուրկ. Ղազարյանը: Ակադեմիայի և ճեմարանի սաները հարցեր ուղղեցին բանախոսներին: Հավարտ հանդիպման տեսուչ Հայր Սուրբը շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար: Բանախոսներին հանձնվեցին պատվոգրեր:

ՄՈՒՏՆ Ի ՎԻՐԱՊ

Սբ. Գրիգոր Լուսավորչի Մուտն ի Վիրապ տոնին ճեմարանի Ա լսարանի սաները, որպես ուխտավորներ, մասնակցեցին Խոր Վիրապում մատուցված Սբ. Պատարագին՝ առաջնորդությամբ ԳՀՃ ավագ վերակացու Տ. Երեմիա աբղ. Աբգարյանի:

ԹԱՅԼԱՆԴԻ ԱՐՔԱՅԱԴՈՒՍՏՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մարտի 16-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածին էր այցելել Թայլանդի արքայադուստր Մահա Չաքրի Սիրինդհորնը: Հյուրին դիմավորեց և Նորին Սրբության ողջույնները փոխանցեց ԳՀՃ տեսուչ Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանը: Հյուրերն առիթ ունեցան շրջելու Մայր Աթոռում, այցելելու թանգարաններ:

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՃԵՄԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻՆ

Ճեմարանականների համար ազնիվ նվեր էին պատրաստել սիրիահայ Պետրոսյան ընտանիքի կանայք: Իրենց մայրական հոգատարությամբ հանձն էին առել պատրաստել ճեմարանականների համար Սիրիահայերի շրջանում հայտնի պահոց ուտելիքներ: Ճաշացանկում կային մուջադարա, էչկլի քյուֆթա, սնկով լահմաջո և թահինով հաց: ԳՀՃ տեսուչ Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանը շնորհակալություն հայտնեց տիկնանց և ճեմարանի անունից գրքեր նվիրեց հյուրերին:

ՃԵՄԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ԱՅՑԸ ԶՈՐԱՄԱՍ

Նախաձեռնությամբ ԳՀՃ տեսուչ Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանի եւ Ն զորամասի գնդերեց Հովհաննես սրկ. Գալստյանի՝ ճեմարանի Ա և Գ լսարանի սաները այցելեցին զորամաս, ծանոթացան զինվորների կյանքին, մասնակցեցին դասախոսության, որի ընթացքում խոսվեց զինվորի պատրաստվածության, դիրքերում լինելու պայմանների ու կարգապահության, ինչպես նաև զինվորի կյանքում հոգևորականի դերի մասին:

ՄԿՐՏՎԵՑԻՆ «ՋԱՏԻԿ» ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԵՎՍ ՄԻ ՔԱՆԻ ՍԱՆԵՐ

Արդեն ամիսներ շարունակ ճեմարանի սաներ Դավիթ սրկ. Սահակյանը, Եփրեմ ուրկ. Եփրեմյանը, Գևորգ դպ. Կարապետյանը և Արսեն դպ. Մարտիրոսյանը իրենց ծառայությունն են բերում «Ջատիկ» աջակցության կենտրոնին: Ճեմարանականների գործունեության արդյունքն է, որ արդեն երրորդ անգամ կատարվում է աջակցության կենտրոնի սաների մկրտություն: Թվով 13 սաներ մկրտվեցին Առինջի Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում՝ ձեռամբ Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանի:

ԾԱՂԿԱԶԱՐԴ

Ծաղկազարդի նախորդ օրը ճեմարանցիները իրենց ձեռքով ուռենու ճյուղերից պսակներ էին պատրաստել: Ճյուղերը անդաստանի կարգի ժամանակ օրհնեց Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանը,

իսկ պատարագից հետո ճեմարանականները շրջեցին քաղաքում և բաժանեցին օրհնված ճյուղերը Էջմիածնի բնակիչներին՝ ավետելով Քրիստոսի մուտքը Երուսաղեմ:

ՃԵՄԱՐԱՆՈՒՄ ԷՐ ՍՈՒՐՈՄԻ ՍԱԲՈՒԼԻՉԸ

ԳՀՃ մագիստրատուրայի Ե և Զ լսարանի սաները հանդիպում ունեցան Հունգարիայի Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանի ռեկտոր պրոֆ. Սուրոմի Սաբուլչի հետ:

ԳՀՃ տեսուչ Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանն այցելեց ՀՄԸՄ սկաուտներին:

Ո՞Վ Է ՈՐՈԳԻՆԵՍԸ ՄԵԶ ՀԱՄԱՐ

Որոգինեսը մարդկության պատմության մեծագույն անհատականություններից մեկն է և Հին Եկեղեցու ամենաբեղմնավոր գրողը: Նա սկսել է ստեղծագործել 218 թ.՝ 33 տարեկան հասակում: Շուրջ 30 տարվա ընթացքում, ըստ սբ. Եպիփան Կիպրացու, նա 6000 գիրք է գրել: Հերոնիմոսն այս թիվը չափազանցություն է համարում, բայց միաժամանակ նշում է մեկ այլ, ևս պատկառելի թիվ՝ 2000 գիրք: Անշուշտ, գիրք ասելով նրանք ի նկատի ունեն պրակները: Օրինակ՝ աստվածաշնչյան տարբեր պատումների մասին Որոգինեսի 574 քարոզներից յուրաքանչյուրն առանձին գիրք է համարվել: Այնուամենայնիվ, նա իր ժառանգությամբ գերազանցել է նախորդ եկեղեցական հեղինակներին և անգերազանցելի է մինչ օրս: Եվ հարցը միայն պահպանված տեքստերի քանակը չէ: Որոգինեսն այնքան համարձակ գաղափարներ արտահայտեց, մեկնության տարատեսակ այնքան մեթոդներ կիրառեց, որ հետագա բոլոր մեկնիչներն այսպես թե այնպես դառնում էին վերջինիս ժառանգները: **Ո՞վ է Որոգինեսը մեզ համար.** աշխատասիրության և Աստվածաշունչ Սբ. Գրոց անդադար ուսումնասիրության հորդոր:



Որոգինեսը եկեղեցական հեղինակներից առաջինն է, որի մասին ունենք առատ կենսագրական տեղեկություններ: Ծնվել է 185 թ. Ալեքսանդրիայում՝ բարեպաշտ քրիստոնյաների ընտանիքում: Հայրը՝ քերականության ուսուցիչ Լեոնիդեսը, նրան դաստիարակել է քրիստոնեական ոգով. դպրոցում տղան ուսումնասիրում էր փիլիսոփայություն, բնագիտական առարկաներ, իսկ տանը ծանոթանում Սբ. Գրքին: Հոր նահատակությունը քրիստոնեական նվիրումի փայլուն օրինակ էր պատանի Որոգինեսի համար: Նա ուսում է ստանում Ալեքսանդրիայի նշանավոր քրիստոնեական դպրոցում, աշակերտում Կղեմես Ալեքսանդրացուն և, քերականություն ու հռետորություն դասավանդելով, պահում իր մորն ու 6 եղբայրներին: Որոգինեսի մասին պատմող հեղինակները (Եվսեբիոս Կեսարացի, սբ. Գր. Սքանչելագործ, Հերոնիմոս, Պամփյուլոս, Փոտ պատրիարք և այլք) միաբան հիացմունքով են նկարագրում նրա բարեպաշտությունը: Որոգինեսը հաճախ աշակերտներից ուսման վարձ չէր վերցնում և գումար էր վաստակում ձեռագրեր արտագրելով: Նա արտասովոր մղումով տրվում էր ճգնությանը՝ քիչ էր քնում, հարատևում էր աղոթքի և պահեցողության մեջ: **Ո՞վ է Որոգինեսը մեզ համար.** բարեպաշտ ու նվիրյալ քրիստոնյայի կերպար:

Սակայն երիտասարդական խանդավառությամբ Որոգինեսը սխալ հասկացավ Տիրոջ խոսքը՝ հանուն երկնքի արքայության ներքինի դառնալու վերաբերյալ (տե՛ս Մտթ. ԺԹ 12) և ամորձատեց ինքն իրեն: «Կատաղին Որոգինես», - այսպես է բնութագրում նրան ԺԲ դ. աստվածաբան և փիլիսոփա Դավիթ Քոբայրեցին՝ հաշվի առնելով նրա հախուռն բնավորությունը: Այնուամենայնիվ, Ալեքսանդրիայի եպիսկոպոս Դեմետրիոսը քաջալերում էր նրան, հորդորում շարունակել զբաղվել աստվածաբանությամբ և դասավանդել: Անցան տարիներ: Որոգինեսը Թեոկտիստոս եպիսկոպոսի խնդրանքով եկավ Պաղեստինի Կեսարիա քաղաքը և քարոզում էր այստեղ: «Դիդախե»-ի («ԺԲ առաքյալների վարդապետությունը») ԺԱ գլխում կարդում ենք ուսուցչի առաքելության մասին. Վաղ Եկեղեցում կարևորվում էր ոչ թե նրա եկեղեցական աստիճան, այլ ուղղափառ հավատք ունենալը: Արևելյան Եկեղեցիները պահել էին մի շարք վաղքրիստոնեական սովորույթներ: Նրանց համար խնդիր չէր, որ աշխարհական Որոգինեսը քարոզում է Եկեղեցում, սակայն Արևմուտքում սա չընկալվեց: Դիտողություններին ի պատասխան՝ 231 թ. Կեսարիայի եպիսկոպոս Թեոկտիստոսը Դեմետրիոսի կողմից Աթենք ուղարկված Որոգինեսին երեց ձեռնադրեց: Զայրացած Դեմետրիոսը պաշտոնապես (տեղական 2 ժողովներում) կարգալույծ հռչակեց Որոգինեսին՝ պատճառաբանելով, որ ներքինին չի կարող երեց լինել: Որոշ հեղինակներ պնդում են, որ իրականում այս քայլն ուղղված էր Պաղեստինի եպիսկոպոսների դեմ: Եվսեբիոսը կարծում է, որ Դեմետրիոսը պարզապես նախանձում էր Որոգինեսին: **Ո՞վ է Որոգինեսը մեզ համար.** մոլեռանդ խանդավառությամբ և բնավորության պատանեկան դեռահասությամբ չգործելու զգուշացում:

Որոգինեսը շարունակեց ուսանել ու ժամանակի ընթացքում փոխեց փիլիսոփայության հանդեպ սկզբնական շրջանում ունեցած իր բացասական վերաբերմունքը: Արդյունքում՝ «Որոգինեսի մոտ գալիս էին շատ այլ կրթված այրեր, որոնք լսել էին ամենուր տարածված նրա անունը և ցանկանում էին համոզվել նրա հոգևոր գիտելիքների հարստության մեջ» (Եվսեբիոս, Զ 18): Հելլենական գիտությունից օգտվում էին նաև բոլոր ջատագով հայրերը, Կղեմես Ալեքսանդրացին, բայց Որոգինեսը կարողացավ փիլիսոփայությունը քրիստոնեության հետ համադրելու արտասովոր գաղափարը բյուրեղացնել և Կեսարիայի իր դպրոցում իսկական «ինտելեկտուալ դրախտ» ստեղծել: Այս շրջանում Որոգինեսին 5 տարի շարունակ աշակերտած սբ. Գրիգոր Սքանչելագործը (Նեոկեսարիայի եպիսկոպոս) իր ներբողում հիշում է. «...Մենք օգտվում էինք ցանկացած պատմություն իմանալու հնարավորությունից՝ լիներ բարբարոսական թե հելլենական, գաղտնի թե բացահայտ, աստվածային թե մարդկային»: Փիլիսոփայության հանդեպ Որոգինեսի վերաբերմունքն իր ձևակերպումն է գտել հետագայում: Սբ

Գրիգոր Նյուսացին, մեջբերելով Մովսեսի հրահանգն առ այն, որ ելքից առաջ հրեաները պետք է վերցնեին եգիպտացիների ոսկին, հարստությունը և կողոպտեին նրանց, բացատրում է. «Պատշաճ է մի կողմ թողնել հատվածի բառացի իմաստը հօգուտ հոգևոր իմաստի և դրա մեջ տեսնել Սբ. Գրքի պատվիրանը՝ ուղղված այն մարդկանց, որոնք ուզում են տիրանալ նաև այն մշակույթի հարստություններին, որոնցից օգտվում են հեթանոսները՝ բարոյական փիլիսոփայություն, աստղագիտություն, բնափիլիսոփայություն, երկրաչափություն, դիալեկտիկա և այլն... Մենք տեսնում ենք, որ այս բանը տեղի է ունենում նաև մեր օրերում. շատերը, որպես ընծա, Աստծո Եկեղեցուն են բերում իրենց աշխարհիկ մշակույթը, ինչպես հռչակավոր Բարսեղը, որն իր երիտասարդ օրերին Եգիպտոսում կուտակած գանձերը նվիրեց Աստծուն»: **Ո՞վ է Որոգինեսը մեզ համար.** լայնախոհության օրինակ, որի շնորհիվ Գ դարի քրիստոնեական դպրոցում հաջողվել էր փոխադարձ հարգանքի և հանդուրժողականության մթնոլորտ ստեղծել, մթնոլորտ, որը պակասում է նաև այսօր:

Բ-Գ դդ. Եկեղեցու անդորրը խանգարում էին միապետականները՝ հերետիկոսներ, որոնք պնդում էին, որ Քրիստոս մարդ է, որի մեջ բնակվել է Աստծո զորությունը (դինամիստներ) կամ Քրիստոս Աստծո հայտնության ձևերից է (մոդալիստներ): Արդեն Գ դ. կեսերին այս հերետիկոսությունը թուլացավ Հռոմում և ստիպված եղավ տեղափոխվել արևելք, ուր ջախջախվեց Որոգինեսի գրչի հարվածներից. 240 թ. նա այցելեց Արաբիա՝ տեղի եպիսկոպոսի հրավերով, որպեսզի փորձի դարձի բերել Բոստրայի՝ միապետականությանը հարող եպիսկոպոս Բերիլոսին: Որոգինեսին հաջողվում է Եկեղեցու գիրկը վերադարձնել նրան: Այս բանավեճն արձանագրված է Որոգինեսի «Երկխոսություններ Հերակլիդասի հետ» գրքում: 248 թ. Ալեքսանդրիայի եպիսկոպոս դարձավ Որոգինեսի աշակերտ Դիոնիսիոս Մեծը: Նա, իր ուսուցչից ստացած հիմնավոր գիտելիքներն ու հռետորական ձիրքն օգտագործելով, կարողացավ Եգիպտոսի հարևան Լիբիայում վերջ տալ միապետականությանը: **Ո՞վ է Որոգինեսը մեզ համար.** ուղղափառ վարդապետության ջատագով, որը Եկեղեցին փորձում էր պաշտպանել ոչ միայն ներքին, այլև արտաքին թշնամուց, ինչի ապացույցն է ընդդեմ հեթանոս Կելսոսի գրված աշխատությունը:

Այդուհանդերձ Որոգինեսն ինքը զերծ չէր հերետիկոսական գաղափարներից: Տիեզերական ժողովները դեռևս չէին հրավիրվել, Եկեղեցու հավատքի կանոնը հստակեցված չէր, չկային հստակ ձևակերպված դոգմաներ, եկեղեցական հայրերի մեկնություններ և ժողովական կանոններ: Որոգինեսն օգտվում էր փիլիսոփաների գրվածքներից և փորձում դա համադրել Սբ. Գրքի հետ: Արդյունքում՝ նա առաջ քաշեց մի շարք թյուրըմբռնումներ հոգիների նախագոյության, հրեշտակների՝ Քրիստոսի զոհաբերությամբ մաքրվելու, հոգիների զնդաձև հարության, Քրիստոսի՝ նաև դևերի համար խաչված լինելու, Աստծո սահմանափակ էության, դժոխային ժամանակավոր տանջանքների, համընդհանուր փրկության մասին և այլն: Այս գաղափարների մեծ մասը տեղ գտան նրա «Սկզբունքների մասին» գրքում: Շուրջ 250 թ. Որոգինեսը ձերբակալվեց (սկսվել էին Դեկոսի հալածանքները): Մեծամեծ չարչարանքներից հետո նրան ազատ արձակեցին, բայց առողջությունը քայքայած 70-ամյա աստվածաբանը 253/4 թ. մահացավ, ըստ Հերոնիմոսի, Փյունիկեի Տյուրոս քաղաքում: Իոհան ավագերեց Մեյենդորֆը գրում է. «Թեև նահատակվելու նրա պատանեկան երազանքը չիրականացավ, բայց նա, անկասկած, պատկանում է վկաների, այսինքն՝ հանուն հավատքի տանջանքներ կրած մարդկանց թվին»: Որոգինեսը մահացավ հաղորդության մեջ լինելով Պաղեստինի, Արաբիայի, Փյունիկեի և Հունաստանի Եկեղեցիների հետ: Ալեքսանդրիայի եպիսկոպոսի հետ այդպես էլ չհաշտվեց: **Ո՞վ է Որոգինեսը մեզ համար.** եկեղեցական հեղինակ, որի հսկայածավալ աշխատության մեջ ներթափանցել են մի շարք թյուր գաղափարներ:

Արդեն Գ դարում Որոգինեսի անձի և ուսմունքի շուրջ ծավալվեցին բուռն վեճեր: Իրավիճակն առավել լարվեց, երբ Որոգինեսի գաղափարները պաշտպանողների շարքերում մի քանի հերետիկոսներ հայտնվեցին: Այո՛, բոլոր ուղղափառ հայրերն էլ քիչ թե շատ ազդված են Որոգինեսից: Այո՛, նրա բազում գաղափարներ ու մեկնություններ ընկած են ուղղափառ հավատքի հիմքում: Օրինակ՝ Մեծն Աթանասը լայնորեն օգտագործել է Որոգինեսի գրքերը՝ աչք փակելով «մեծ ալեքսանդրացու անձնական կարծիքների» վրա (Նիկիայի մասին, ԻԷ 1-2): Սբ. Բարսեղ Կեսարացին և սբ. Գրիգոր Աստվածաբանը Որոգինեսի երկերի ծաղկաքաղն են կազմել: Սակայն ձևավորվել էր նաև ավելի զգուշավոր մի բանակ՝ Պետրոս Ալեքսանդրացի, Թեոդորոս Մոփսուեստացի, Դիոդորոս Տարսոնացի, Ապողինար Լավոդիկեցի (վերջին երեքը հերետիկոսներ են), որը գործում էր «ծառը պտղից է ճանաչվում» սկզբունքով և Եկեղեցու ուշադրությունն էր հրավիրում Որոգինեսի հայացքներից ազդված մի շարք հերետիկոսների վրա: Արդյունքում՝ 543 թ. Կ. Պոլսի տեղական ժողովում Մինաս եպիսկոպոսը նզովեց Որոգինեսի ուսմունքը, ապա Հուստինիանոս կայսրը մի հրովարտակով անդրադարձավ Արիոսից սկսած բոլոր հերետիկոսու-թյուններին՝ այդ թվում նաև Որոգինեսի «չարափառ գաղափարներին»: 553 թ. «3 գլուխների» ժողովում (Բյուզան-դական ավանդության ուղղափառ աշխարհի համար՝ տիեզերական Ե ժողով) Թեոդորոս Մոփսուեստացու և Իբաս Եդեսացու գաղափարների հետ նզովվում են նաև Որոգինեսի գաղափարները: **Ո՞վ է Որոգինեսը մեզ համար.** նզովյալ հերետիկոս չէ. Եփեսոսի ժողովից (431 թ.) հետո Հայոց Եկեղեցին չի ընդունել որևէ այլ «տիեզերական» կոչված ժողով, տեղական ժողովներով էլ չի նզովել Որոգինեսին, սակայն պարզ է, որ նա ունի ուղղափառ դավա-նանքին հակասող մտքեր, ուստի չի կարող Եկեղեցու Հայր կամ Ուսուցիչ կոչվել: Այսուհանդերձ, մինչ Ուղղափառ և Կաթոլիկ Եկեղեցիներում հաճախ վառում, ոչնչացնում կամ խմբագրում ու աղավաղում էին Որոգինեսի գրքերը, Հայ Եկեղեցու վարդապետները թարգմանում և որոշակի զգուշավորությամբ օգտվում էին դրանցից:

Պատրաստեց Թովմաս դպ. Առաքելյանը

ՆԵՍՏՈՐ ԵՎ ՆԵՍՏՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Նեստորականության գլխավոր գաղափարախոսը և առաջատարը Նեստորն է (Νεστόριος, 381 – 451 թթ.): Նա 428 թ. դարձել է Կոստանդնուպոլսի արքեպիսկոպոս, իսկ մինչ այդ երեց է եղել Անտիոքում (Սիրիա): Նա քրիստոսաբանություն էր սովորել Թեոդորոս Մոփսուեստացու դպրոցում, և ըստ էության նրա ամբողջ քրիստոսաբանությունը վերջինիս հայացքների կրկնությունն էր: Հաշվի առնելով Անտիոքյան դպրոցի մոտեցումները՝ պետք է նշենք, որ սխալ կլինի կարծել, որ Նեստորը կամ Անտիոքյան դպրոցի որևէ ներկայացուցիչ վերապահումներ ուներ Քրիստոսի աստվածությունն ընդունելու հարցում: Նիկիական կամ Նիկիոպոլսյան ուղղափառ հավատքին նրանց հավատարմությունը կասկածի տակ չէր դրվում նույնիսկ նրանց հակառակորդների կողմից:

Նեստորի անձի հետ կապված ամբողջ զավեշտն այն է, որ ըստ էության նրա հայացքներն այնքան էլ նույնական չեն «նեստորականությանը» (դասական իմաստով): 431 թ. հունիսի 22-ին Բյուզանդիայի Թեոդոս Բ կայսեր հրամանով գումարվել է Եփեսոսի Գ Տիեզերական ժողովը: Ժողովին մասնակցել են շուրջ 200 եպիսկոպոսներ: Ժողովում Նեստորի գլխավոր ախոյանը եղել է Ալեքսանդրիայի արքեպիսկոպոս սբ. Կյուրեղ Ալեքսանդրացին (Κύρηλλος Α' Αλεξανδρείας, 376 – 444 թթ.): Եփեսոսի ժողովը նզովել է Նեստորին և նրա հետևորդներին: Հռոմի աթոռը և կայսրը ընդունել են Տիեզերական ժողովի որոշումները: Աթոռազրկված Նեստորին Եփեսոսի ժողովից հետո թույլատրվել է վերադառնալ Անտիոքին մոտ գտնվող մի վանք, իսկ 435 թ.-ին նա աքսորվել է Եգիպտոս:

Համարվում է, որ Բյուզանդիայի Մարկիանոս կայսրը հրավիրել էր նրան մասնակցելու Քաղկեդոնի ժողովին, սակայն ճանապարհին նա մահացել է: Եփեսոսի ժողովից անմիջապես հետո Կյուրեղ Ալեքսանդրացին ձեռնամուխ է եղել Նեստորի նախորդների քրիստոսաբանական հայացքների քննադատությանը և վերլուծմանը: Նեստորի հերետիկոսությանը Եկեղեցին պատասխանեց սբ. Կյուրեղի շուրթերով և պատասխանեց հավատքի ջերմ ու պայծառ խոստովանությամբ: Եփեսոսի Գ Տիեզերական ժողովը հավատքի նոր հանգանակ չհաստատեց, սակայն ժողովը ընդունեց և հավանություն տվեց Կյուրեղի քննադատական թղթերին և գլուխներին: Դրանք իրենցից ներկայացնում էին նզովքներ՝ ուղղված Նեստորի դեմ:

Ստորև զուգահեռաբար ներկայացնում ենք ուղղափառ և նեստորական ուսմունքները:

Ուղղափառ դավանանք	Նեստորականություն
1. Կույս Մարիամն Աստվածածին է («Θεοτόκος»):	1. Մարիամը մարդածին («ἀνθρωποτόκος») է կամ էլ Քրիստոսածին («Χριστοτόκος»):
2. Քրիստոսի բնությունները միացած են բնականորեն, ըստ բնության, ձևավորելով մեկ իրողություն, մեկ հիպոստասիս՝ առանձնավորություն (անձ), և մեկ բնություն:	2. Քրիստոս անբաժանելի է իր գոյությամբ իբրև Քրիստոս, բայց երկակի է իր գոյությամբ իբրև Աստված և մարդ:
3. Միության մեջ Աստծո Բանը մնում է անխառն և անշփոթ:	3. Միության մեջ երկու բնությունները մնում են անփոփոխ և առանձին:
4. Աստծո Բանն ինքն է մարմնավորվել և մարդացել:	4. Աստծո Բանը միայն բնակվել է մարդ Հիսուսի մեջ, ինչպես տաճարում:

Պատրաստեց Հրաչ սրկ. Սուլթանյանը



Խաչի Քո, Քրիստո՛ս, երկիրպագանեմք. եւ զսուրբ խաչելութիւնդ Քո մեծացուցանեմք. եւ զսուրբ թաղումդ Քո փառաւորեմք:
Եկա՛յք, հաւատացե՛լք, երկրպագեսցո՛ւք Քրիստոսի Աստուծոյ մերոյ, վասն զի եկն ի ձեռն խաչի Իւրոյ, շնորհեաց պարգեւս աշխարհի:
Սուրբ Աստուա՛ծ, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ թաղեցար վասն մեր. ողորմեա՛ մեզ .

Ա Մ Է Ն

ՔՐԻՍՏՈՆՅԱՅԻ ՊԱՐԾԱՆՔԸ

«Եվ ով իր խաչը չի վերցնում և իմ հետևից
չի գալիս, ինձ արժանի չէ» (Մտթ. Ժ 38):

Շուրջ 2000 տարի առաջ ասված այս խոսքերը երբեք ու երբեք չեն կորցնելու իրենց զորությունը. «Երկինք ու երկիր կանցնեն, բայց Իմ խոսքերը չեն անցնի» (Մրկ. ԺԳ 31): Աշխարհի ամենամեծ մեղքն այն է, երբ մարդ չի հասկանում և չի ճանաչում, թե ինչ արեց իր համար Քրիստոս: Հիսուս սատանայից վերցրեց և մեզ վերադարձրեց մեր իշխանությունը, Նա կրկին ու կրկին արտահայտեց այն սերը, որի միջոցով փրկվում է Իր պատկերն ու նմանությունը կրող մարդը: Եվ այս ամենը նա արեց Խաչի միջոցով, Քրիստոս խոնարհվեց, անարգվեց, բայց հանձն առավ բարձրանալ Խաչը և խոնարհեցնել մարդուն, Քրիստոս իր խոնարհությամբ խոնարհություն սովորեցրեց: Աշխարհի վրա գտնվող ամեն պատերազմ, ամեն բռնություն և ամեն անօրենություն կարող ենք հաղթել միայն ու միայն Խաչի միջոցով:

Դարեր առաջ Կոստանդիանոս արքան, երբ անօրեններից բազում պարտություններ կրեց, աղոթք առաքեց առ Աստված. նա բացահայտ տեսիլք տեսավ. երկնքում երևաց Խաչի նշանը և մի գրություն, որ ասում էր. «Սրանո՛վ կհաղթես», և իր դրոշակը Խաչի վերածեց, իսկ բոլոր զինվորները, իրենց վահանների վրա խաչը դրվագելով, փոքրաթիվ խմբով հարձակվեցին թշնամիների մեծաթիվ բանակի վրա և հրաշալի հաղթանակ տարան: Թագավորն ու հասարակ զինվորներն ապավինեցին Քրիստոսի արյամբ սրբված Խաչին: Այդ Խաչով է, որ միայն կարող ենք պարծենալ. «Քավ լիցի, որ ես պարծենամ այլ բանով, քան միայն մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով» (Գաղ. Զ 14):

Խաչը Քրիստոնյայի համար պսակ է, որով բացատրվում է Քրիստոսի կյանքի խորհուրդը. այն, որ Հիսուս մարդու հանդեպ սիրուց տոգորված եկավ աշխարհ, չարչարվեց, խաչվեց և իր խաչելությամբ նոր իմաստ, նոր երանգ տվեց Խաչին: Ըստ Դավիթ Անհաղթի՝ Քրիստոնեական Եկեղեցին պաշտում է խաչը, քանի որ խաչը Քրիստոսի ձևն ունի և Քրիստոս ամեն պահ խաչի վրա է, էանում է նրա հետ և երբեք չի հեռանում խաչից: Գողգոթա տանող ճանապարհը ծանր է և ցավոտ, բայց այդ ծանրության և ցավի ճանապարհի մեջ է որ գտնում ենք Քրիստոսին՝ մեր միակ ու ճշմարիտ Աստծուն:

Մարդ արարածը, Քրիստոսի խաչելության օրինակն իր ներսում ունենալով, ամեն օր իրեն պետք է Խաչը բարձրացնի՝ դառնալով ժառանգակիցը ճշմարտության և արդարության: Խաչով է, որ պետք է պարծենանք և ուրիշ ոչ մի բանով, խաչով է, որ պետք է դառնանք և հաղթենք չարին, Խաչ և միայն Խաչ, սրա մեջ է ամբողջ իմաստը մեր կյանքի, սրա մեջ ենք մենք փնտրելու և գտնելու Խաչված և Խաչով չարին հաղթած Աստծուն:

Պատրաստեց Արամայիս սրկ. Սողբաթյանը

«ԴՊԻՐ» ԲԱՌԸ

ԿՐՈՆԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՌՄԱՆՆԵՐՈՒՄ

Թող զարմանք չառաջացնի մերկապարանոց այն հայտարարությունը, թե նվիրապետական աստիճանակարգությունը Հայ Եկեղեցում իր անվանումներն ստացել է քաղաքական-դավանաբանական խնդիրների արծարծման շրջանում, ուստի նվիրապետական բոլոր աստիճաններն էլ իրենց անվանումները փոխառել են Ասորի և Հույն եկեղեցիներից: Նախքան մեսրոպատառ հայերենի գործածումը, Աստվածաշնչի թարգմանությունն ու դպրատների ստեղծումը՝ երկրում ամեն ինչ հունական ու ասորական էր՝ դպրոցներից մինչև եկեղեցական ժամակարգությունը: Պարսիկները, այո՛, նույնպես ունեին իրենց ազդեցությունը, բայց դա, անկախ բազմակողմանի հասարակական-քաղաքական ազդեցություններից, այնքան էլ չէր ազդում Հայ Եկեղեցու նվիրապետության և ծեսի վրա: Մահմեդականների ազդեցությունը հայոց ծեսում նկատելի կերպով երևացել է արաբական 200-ամյա և ավելի տիրապետության շրջանում:

Եկեղեցական նվիրապետությունը սկիզբ է առնում առաքելական ժամանակաշրջանից: Չընայած Վաղ Եկեղեցում նվիրապետական աստիճանները երեքն էին՝ սարկավագություն, քահանայություն և եպիսկոպոսություն, սակայն այլ կրոնների հետ առճակատման մտնելու և եկեղեցին բազմատարր ազդեցություններից փրկելու համար նվիրապետական աստիճանակարգությունը դարձավ ավելի բարդ կառույց: Նվիրապետական խոնարհ աստիճանների ամբողջությունն այլ կերպ կոչվում է դպրություն, որը ներառում է 4 աստիճան՝ դռնապան, ընթերցող, երդմնեցուցիչ և ջահընկալ, թեև դրանց համարժեք գործածվել են նաև մոմակալ, երգող, գրակարդաց, տիրացու եզրույթները:

Դպիր բառը ժամանակի ընթացքում հանդես է եկել շատ իմաստներով: Ստորև կանդրադառնանք բառարանագրության մեջ առկա իմաստների դասակարգմանն ու քննությանը՝ դրանց խորքային ու սկզբնական իմաստները բացատրելով տարբեր կրոններում տեղ գտած մեկնաբանություններով և լեզվաբանական մոտեցումներով:

1. Դպիր բառն առաջացել է պարսկերեն dabir, dibir բառերից՝ գրող, քարտուղար նշանակությամբ, ինչպես վկայված է Հր. Աճառյանի և Գ. Ջահուկյանի ստուգաբանական բառարաններում: Ուստի պատահական չէ, որ

Չարենցն իր «Գովք խաղողի, գինու և գեղեցիկ դպրության» պոեմում դպիր բառն օգտագործում է ուսյալ, գրագետ իմաստով: Նշենք նաև, որ Չարենցի անտիպ՝ Կոմիտասի հիշատակին նվիրված պոեմի անվանաթերթին իր անվանը զուգահեռ գրել է՝ «դպիրն մեղսաբարո նայիրաբառ երկրի»՝ ի նկատի ունենալով բանաստեղծի վեհ կոչումը:

2. Դպիրները (եբր.՝ סופר סת"ם) նաև առանձին խումբ էին հրեական մոլեռանդ աստիճանավորների, որոնք կոչված էին լինելու ժողովրդի օրենսգետներ և ուսուցիչներ: Այսուհանդերձ Ա դարի պատմիչ Հովսեփոս Փլաբիոսը նրանց որպես առանձին կրոնական խմբավորում չի նկատում, քանի որ դպիրն ու ռաբբին դիտվել են նույնանիշ բառեր: Տակավին Ք. ա. 11-րդ դ. դպիրներն իրականացրել են այնպիսի գործառույթներ, որոնք այսօր կարող են իրագործել իրավաբանները, լրագրողները, կառավարության աշխատակիցները, դատավորները կամ ֆինանսիստները, այդ իսկ պատճառով անգլիախոս երկրներում գրասենյակային աշխատողին անվանում են մինչև հիմա դպիր (ֆր.՝ clerc, անգլ.՝ clerk, ռուս.՝ клерк, լատիներեն clericus ձևից)՝ եկեղեցական աստիճանավորի մոռացված նշանակությամբ, սակայն այնուամենայնիվ, դպիրներն ավելի շատ նման էին պետության քարտուղարների, որոնք գրում և հրապարակում էին թագավորների հրովարտագրերը: Նախնյաց հնագույն ավանդազրույցները նրանք են մեկտեղել Թալմուդ ժողովածուի մեջ: Նրանք, նախքան

Աստծո անունը՝ YHVH, գրելը, պետք է լվանային իրենց ամբողջ մարմինը և մաքրեին գրիչը: Մագաղաթները պատրաստում էին միայն մաքուր կենդանիների մաշկից, իսկ եթե անգամ մի վրիպակ կամ բացթողում էր լինում, նորից էին արտագրում: Դպիրների գործն ավելի շատ հրատարակության ոլորտում էր. նրանց էին վստահվում ձեռագրական աշխատանքները: Մակաբայեցիների շրջանում նրանք առաջնորդում էին ժողովրդին: Հրեաների համար մեծ է հատկապես Եզրաս դպրի (עזרא) դերը, որը, վերադառնալով Բաբելոնյան գերությունից, վերահաստատեց Թորան: Հատկանշական է նաև այն, որ Եզրասը հիշատակվում է նաև Ղուրանում, բայց ոչ իսլամի մարգարեների շարքում:

3. Գրեթե բոլոր հնագույն ազգերն ունեցել են դպիրներ, որոնք մեծ դեր են խաղացել կրոնական տեքստերի և պետական փաստաթղթերի փոխանցման մեջ: Նշենք, որ հին եգիպտացիները գրերի գյուտը հայտնաբերողին կոչում էին դպիր. նա աստվածների դպիրն էր, որը գիտական և բարոյական օրենքների էր տիրապետում:

4. Հին հայկական դիցարանում պերճախոսության և դպրության աստվածը համարվել է Տիր դպիրը կամ գրողը (նրա անվան հետ են կապվում «գրողի տարած», «գրողի ծոցը» արտահայտությունները), որն ուներ մեռնողների և ծնվողների անունների գրանցման համար նախատեսված մի մատյան: Նա հիշվում է որպես «դպիր գիտութեան քրմաց» և «գրիչ Որմզդի», այսինքն՝ Արամազդի գրագիր: Հայոց իրականության մեջ, սակայն, Մաշտոցն է, որ հիմք է դնում գրի ու դպրության: Ստուգաբանողներից շատերը կարծում են, որ «մաշտոց» ածանցավոր բառը՝ «մաշտ (մաշտել-քերել, քերծել)» + «ոց» (ինչպես՝ կապոց) բաղադրիչներով, նշանակում է քերելու գործիք: Տարբեր լեզուներում գրելը կապված է քերելու հետ, օր.՝ հունարեն γραφω՝ «քերել, գրել», γραμματευζ՝ «գրիչ (գրող, դպիր), քարտուղար», լատ. Scribere՝ «քերել, գրել», scriba՝ «գրող, քարտուղար», որից և անգլերենին և ֆրանսերենին անցած scribe (դպիր) ձևը: Այդ իսկ պատճառով բանաստեղծներին համարում ենք նաև քերթողներ: Այսպիսով պարզ է, որ «մաշտոց» հասարակ անունը, որը կեղծանուն է դարձել, նախապես ունեցել է գրող, դպիր իմաստը: Նշանավոր հայագետ Նիկողայոս Ադոնցը հետաքրքիր զուգադրություն է տանում՝ Արամազդ-Տիր, Արամազդ-Մաշտոց: Եթե առաջին պարագան վերոբերյալ տեղեկություններով կարելի է մեկնաբանել, ապա Մաշտոցի հետ կապը կարիք ունի հստակ բացատրության: Արամազդի իրանական անվանման՝ Ահուրամազդայի երկրորդ բաղադրիչը՝ mazda-ն, կապվում է Մաշտոցի անվան հետ:



Անգամ Մաշտոցի բանահյուսական կերպարում տեսնում ենք Տիր աստծու առանձնակի գծերը: Բայց այստեղ մեր նպատակն ամենևին պատմական, ժողովրդական և բանահյուսական աղբյուրների քննարկումը չէ, այլ ցույց տալը, որ նախագրաբարյան շրջանում և Մաշտոցի ժամանակ դպիր բառը հասկացվել է, ինչպես հնագույն ժողովուրդների մոտ, «գրող, քարտուղար» իմաստներով:

5. Դպիր բառից ունենք հետևյալ բառաբարդված և ածանցված կազմությունները՝ դպրախումբ, դպրանոց, դպրատուն, դպրապետ, դպրեվանք, դպրոց: Դպրանոց անվանումը կարող է դպրեվանք և դպրոց եզրերին համարժեք գործածվել, սակայն դպրեվանքն ունի մասնավոր կիրառություն: Անկախ իր ունեցած ընդհանուր նշանակությանը (վանքին կից հոգևոր դպրոց, վարդապետարան)՝ այժմ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության դպրոցն է կոչվում միայն դպրեվանք, ինչպես նաև Կ. Պոլսի Պատրիարքության ենթակա Ս. Խաչ դպրեվանքը, մնացած բոլոր հոգևոր հաստատություններն ունեն իրենց հատուկ անվանումները:

6. Պատմության մեջ «դպիր» բառը շատ դեպքերում դարձել է գրական կեղծանուն՝ չնայած խորքային առումով այն նույն «գրող, գրագիր» իմաստն է կրում: Հայտնի են Աբգար Դպիր Թոխատեցին, որը 1565-ին լույս է ընծայել «Խառնայփնթուր տումարի...» օրացույցն (1 էջանոց) ու առաջին հայերեն Սաղմոսարանը, և Պաղտասար Դպիրը՝ միջնադարյան մեր նշանավոր տաղերգու-քնարերգակներից, որը 1720-1760 թթ. մեծապես նպաստել է հայ գրական-հրատարակչական աշխատանքներին:

Պատրաստեց Նարեկ դպիր Գասպարյանը

ՀՈՒԴԱՅԻ ՀԱՄԲՈՒՅՐԸ

Ավետարանական կերպարներից ամենավիճելին և առեղծվածայինը Հուդա Իսկարիովտացին է: Նրա թե՛ կանչը առաքելության, թե՛ պաշտոնը, թե՛ առավել ևս դավաճանությունն ու ինքնասպանությունը դարեր շարունակ անհանգստացնում էին ուսումնասիրողներին, մեկնիչներին, ինչպես նաև պարզ ընթերցողներին: Նրա անձի շուրջ միշտ առաջանում էին վիճաբանություններ, տարաձայնություններ, մանավանդ Հուդայի ավետարան պարականոն գործի հայտնաբերությունից հետո:

Հուդան ի հայտ է գալիս Ավետարանում. նախ որպես առաքյալ ուղարկվում է այլ առաքյալների հետ քարոզելու, բժշկելու և հրաշքներ գործելու (Ղուկ. 10 1-17), ներկա է լինում Մեսիայի հրաշքներին և փառավոր գործերին, միաժամանակ լինելով գանձապահ ու գող, ինչպես ասում է Հովհաննեսը (Հովh. 13 6): Տերը բազմիցս զգուշացնում է նրան, փորձում է սթափեցնել նրան իր չար խորհրդից, սակայն՝ ապարդյուն. Հուդան վերջիվերջո մատնում է Տիրոջը 30 արծաթի փոխարեն, և մատնում Նրան՝ ոչ թե ուղղակի ցույց տալով կամ բերելով զինվորներին վերնատուն, այլ՝ համբույրով, որը սիրո և բարեկամության մեծագույն նշանն էր: Այդ համբույրը մեկնիչների բազմաթիվ հարցեր էր առաջացնում և տարբեր ձևերով մեկնաբանվում:

Բանն այն է, որ Հուդայի մատնությունը աշխարհի ամենաստոր և դատապարտելի արարքներից է համարվում, սակայն մի տեսակ հակասական է թվում այն, որ եթե Հուդան այդքան ստոր ու անզգամ էր, որ առանց ամոթի մոտեցավ ու համբուրեց Տիրոջը, լսեց Նրա հանդիմանությունը ու այդքան սառը սրտով մատնեց Նրան, ապա ինչո՞ւ մի օրում զղջաց ու փոշմանեց, ինչո՞ւ վերադարձրեց այդքան սիրելի դրամները ու ինքնասպան եղավ: Չէ՞ որ ստոր ու անզգամ մարդու նկարագրին չի համապատասխանում իր արարքը, անզգամը միշտ էլ անզգամ է մնում, և ստոր ու սառը մարդիկ այդքան շուտ ինքնասպան չեն լինում: Փորձենք հասկանալ, թե ով էր իրականում Հուդա Իսկարիովտացին և ինչը դրդեց նրան մատնությանը: Հուդան Քրիստոսի ընտրյալ աշակերտներից մեկն էր, անգամ ընտրյալներից էլ ընտրված էր լինելու Տիրոջ գանձապահը՝ կիրթ և ուշիմ լինելու պատճառով: Հիսուսի ժամանակաշրջանի հրեա հասարակությունը ապրում էր մեսիական սպասումներով, դա ակնհայտ է Ավետարանից, և այդ սպասումներն իրարից տարբեր

էին: Հրեաների ավելի կիրթ զանգված մեծամասնությամբ ակնկալվում էր Դավթի թագավորության վերականգնումը, ազատագրումը հռոմեացիների լծից և մեսիական փառավոր աշխարհակալ թագավորությունը երկրի վրա: Այդ սպասումների պատճառով էլ նրանք չկարողացան հավատալ խոնարհ Հիսուսին և խաչեցին իրենց Փրկչին:

Ամենայն հավանականությամբ Հուդան էլ այդ մտածելակերպի կրողներից մեկն էր: Նա ականատես էր Մեսիայի հրաշքներին, անգամ ինքն էլ Նրանից զորություն էր ստացել բժշկելու և դևերին հալածելու (Ղուկ. 10 17): Նա տեսնում էր Քրիստոսի փառավոր գործերը, չորեքօրյա Ղազարոսի հարությունը ևն, և էլ ավելի էր համոզվում մեսիական դարի գալստյան մեջ: Մեսիայի արքայության գալուստը էլ ավելի էր փափագելի նրա համար այն հանգամանքով, որ նա պատրաստվում էր դառնալ աշխարհական թագավորի գանձապահ՝ երկրորդ մարդը արքայական պալատում: Որքա՜ն փափագելի էր այդ փառքը իր արծաթասեր հոգու համար: Ինչքա՜ն մեծ գումարներ էին լինելու իր ձեռքում, ինչքա՜ն ոսկի նա կկարողանար հափշտակել, հիրավի՛, նա էլ էր դառնալու աշխարհի ամենահարուստ մարդը: Սակայն իր ծրագրերը դեռևս չէին իրականանում: Նա տեսնում էր Հիսուսի զորությունն ու փառքը, տեսնում էր, թե ինչպես նա իշխանությամբ դուրս հանեց Տաճարից վաճառականներին ու լումայափոխներին, փորձեց հաստատել իր իշխանությունը, սակայն փարիսեցիների ու այլ կրոնավորների ընդդիմությունը միշտ խոչընդոտ էր Մեսիայի առաջ:



Փարիսեցիները մոլորեցնում էին ժողովրդին, Մեսիայի հրաշքներին ծուռ մեկնաբանություններ էին տալիս և հաստատում այդ օրենքով, թույլ չէին տալիս, որ երևա մեսիական փառքը և ժողովուրդը միաբանվի նոր արքայի շուրջ: Իր մեծ նպատակին հասնելու համար Հուդան, նախապես ներշնչված լինելով սատանայի կողմից, որոշում է հնարավորինս շուտ վերացնել այդ խոչընդոտը և առիթ տալ Մեսիային ոչնչացնելու իր թշնամիներին: Նրա ծրագրի համաձայն՝ նա պետք է հավաքեր թշնամիներին Հիսուսի առաջ, և Մեսիան պետք է ոչնչացներ նրանց Իր զորությամբ և հաստատեր Իր թագավորությունը, իսկ Հուդային տար արքունական գանձապահի պաշտոնը:

Նրա համբույրը նոր արքային պատկանելիության և բարեկամության նշանն էր, որպեսզի Մեսիան չկարծի, որ Հուդան ստորությամբ է մատնում Իրեն, այլ որ հետագայում այդ համբույրով սկսվի մեսիական դարաշրջանը: Այդ ամենը, անշուշտ, իր արծաթասեր հոգու երևակայության արդյունքն էր, հենց այդ ընչասիրության պատճառով է, որ Սատանան մտավ նրա մեջ և սերմանեց այդ «հանճարեղ» ծրագիրը: Սակայն, ինչպես և բոլոր նմանատիպ ծրագրերը, այն չիրականացավ. Մեսիային սպանում են, աշակերտները ցրվում են, ամեն ինչ մի ակնթարթում փլվում է և դա հենց իր նենգության պատճառով է լինում: Նա այլևս չի դառնա արքունական գանձապահ, այլ կմնա մատնիչ և դավաճան: Նա ընկնում է հուսահատության մեջ, ինչպես և բոլոր նրանք, ովքեր խաբված են լինում Սատանայի պատրանքներից: Հուդան վերադարձնում է արծաթը ատելի փարիսեցիներին՝ շպրտելով այն իր թշնամիների առաջ, քանզի և իրենց իսկ արծաթը ատելի էր իր համար, ապա այրող հեծությամբ ու հուսահատությամբ վերջ է տալիս իր կյանքին, քանզի իր կյանքն էլ արդեն ատելի էր իր համար՝ որպես հանգած մի մոմ, որով ինքն իսկ այրեց իր մեծամեծ ծրագրերի և պատրանքների դավթարը...

Պատրաստեց Դավիթ սրկ. Գիշյանը

ԽԱՉՎԱԾ ՄԻ ՍԻՐՏ

Հոգնա՛ծ, նեղացա՛ծ աշխարհից ունայն,
Ելա փնտրելու մի ուրիշ աշխարհ,
Ուր գինը սիրո հենց սերն է միայն,
Եվ դառն է նրա համբույրը օտար:

Բայց հանդիպեցի ճանապարհներին
Անգութ անճարի, անողոք չարի,
Ու մոլորվեցի՝ դառնալով գերին
Կեղծ ճշմարտության առասպելների:

Լու՛յս չգտա ես «ճշմարտության» մեջ,
Արդարությունն էր բացակա անգամ,
Սիրո բոցերով վառվող անընդմեջ՝
Խաչված մի Սիրտ էր մղկտում անձայն:

Լուռ էր Նա. գամված Իր փայտե խաչին՝
Արտասավում էր բյու՛ր մեղքերը մարդկանց.
Եվ ի քավություն մեղքի առաջին՝
Իր կյանքն էր շնորհում մութ մահվան դիմաց:

Գարուն է, արև, բայց հոգիս ավեր՝
Մոլորված, անլույս հույս է որոնում
Ու փնտրում դարեր անծանոթ մի Սեր,
Որն Իր հարությամբ Լու՛յս է քարոզում…

Լույսն այդ որոնում, փնտրում է ունայն
Իմ խավար հոգին, ուր մի արահետ
Տանում է դեպի Խաչված սիրտը Այն,
Որ անճառ Սերն է ճառագում հավետ…

Հեղինակ՝ Գևորգ դպ. Կարապետյան



Հորիզոնական

1. Զատիկ կամ...
3. Հայ նախատակ, որի մասին գրվել է օպերա
5. Երկիր, որի նշանաբանն է.
«Աստծո և երկրիս համար»:
6. Չինացի առաջին փիլիսոփան
9. Երկրորդ դարի մեծագույն աստվածաբանը
11. Ֆրանսիացի ականավոր քանդակագործ
12. «Դոն Ժուան» պոեմի հեղինակը
14. Հնդկական կրոններից մեկը
17. Թուրքիայի ներկայիս մայրաքաղաքը
18. Լատինական աստվածաբանության հայրը

Ուղղահայաց

2. Հայ-կաթոլիկ միաբարական շարժում
4. Գերմանացի նշանավոր փիլիսոփա
7. Հռութի հայրենիքը
8. Արեգակնային համակարգի
ամենափոքր մոլորակը
10. Քրիստոնեահալած կայսր
13. Հայ ազնվական տոհմ Ռուսաստանում
15. Դասական փիլիսոփայության
խոշորագույն ներկայացուցիչներից մեկը
16. Փոքրիկ պետություն Ֆրանսիայի
հարավ-արևելքում
19. Պետություն՝ 44 հեկտար մակերեսով

Ֆեյսբուքում մեզ կարող
եք հետևել այստեղ՝
www.facebook.com/gevorgianseminary

Ձեր հարցերը կարող եք ուղղել մեզ
հետևյալ էլ. հասցեով՝
gevorgianseminary@gmail.com

Հասցե՝ Մայր Աթոռ Սուրբ
Էջմիածին, Գևորգյան հոգևոր
ճեմարան
Հեռախոս՝ (010) 510 180